Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 02-05-2024 թ. որոշմամբ
««ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆ 31-20 31շ. բն.20
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00384
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-10-13
1.5 ՀՎՀՀ-ն		00064024
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99001662
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.sbsbf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		office@sbsbf.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մարինե Մկրտչյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	«Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների հիմնում Լոռու, Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի 9 բնակավայրերում	44,321,450
	Արտակարգ արձագանք նպաստելու տուժած աղջիկների և տղաների սահուն ինտեգրմանը նախադպրոցական կրթության մեջ	7,995,620

Digitally signed by
ARAM SARGSYAN 3708800605
Date: 2024.05.08 16:07:40

	«Վաղ մանկության խնդիրներ» միջազգային ամսագրում տպագրված և հայերեն լեզվով թարգմանված հոդվածների տարածում և քննարկում	1,713,184
	Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստում	8,415,363
	Բանկային ավանդի տոկոս	402,079
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստում	1,960,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների հիմնում Լոռու, Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի 9 բնակավայրերում	44,586,760	
Արտակարգ արձագանք՝ նպաստելու տուժած աղջիկների և տղաների սահուն ինտեգրմանը նախադպրոցական կրթության մեջ	2,223,975	
«Վաղ մանկության խնդիրներ» միջազգային ամսագրում տպագրված և հայերեն լեզվով թարգմանված հոդվածների տարածում և քննարկում	1,713,184	
Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման ծախսեր	5,579,846	
Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստման ծախսեր	1,141,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	59,817,232	

13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	55,244,765

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____17____ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ

"Four A Consulting"CJSC

audit — accounting — advisory — assurance

ՀԱՊԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136, ք. Երևան Հ2,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Քայլ առ քայլ» բարեգործական ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները պատրաստված փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Հիմնադրամի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2023 թվականի նոյեմբերի 01-ին արտահայտել է վերապահումով կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան,, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի

Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար
15 մարտի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	4,643	4,813
Ոչ նյութական ակտիվներ		42	79
		4,685	4,892
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	16,983	18,542
Դեբիտորական պարտքեր	6	2,456	3,828
Բանկային ավանդներ	7	6,083	7,683
Դրամական միջոցներ	8	8,066	5,430
		33,588	35,483
Ընդամենը ակտիվներ		38,273	40,375
Զուտ ակտիվներ	9	28,907	30,969
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	10	2,050	2,050
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	6,324	-
Կրեդիտորական պարտքեր	12	992	7,356
Շահութահարկի գծով պարտավորություն		-	-
		9,366	9,406
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		38,273	40,375

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մարտի 15-ին՝

Մարինե Մկրտչյան
Գործադիր տնօրեն

Արամ Սարգսյան
«Էյչէս Ընդունիթ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհից եկամուտ	11	47,682	48,653
Հասույթ	13	14,173	7,585
Ավանդի գծով տոկոսային եկամուտ		402	410
Այլ եկամուտներ		445	6
Աշխատավարձի գծով ծախս		(13,969)	(15,502)
Մատուցված ծառայությունների գծով ծախս		(12,551)	(8,980)
Վերապատրաստման նյութական ծախսեր		(14,270)	(15,927)
Վերապատրաստման այլ ծախսեր (հյուրանոցային ծախսեր, կեցության վճարներ)		(9,894)	(5,552)
Տրանսպորտային ծախսեր		(4,542)	(3,539)
Վառելիքի գծով ծախսեր		(1,617)	(2,251)
Գործուղման ծախսեր		(572)	(661)
Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր		(4,040)	(3,725)
Գրասենյակային, կոմունալ և կապի ծախսեր		(976)	(998)
Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա		(205)	(735)
Պաշարների դուրսգրման և արժեզրկման ծախսեր		(1,878)	-
Այլ ծախսեր		(308)	(512)
Գործառնական գործունեությունից շահույթ/ վնաս		(2,120)	(1,728)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ շահույթ/ վնաս	14	58	(150)
Շահույթ մինչև հարկելը		(2,062)	(1,878)
Շահութահարկի գծով ծախս		-	-
Զուտ շահույթ		(2,062)	(1,878)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(2,062)	(1,878)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից մուտքեր	54,030	38,595
Մատուցված ծառայությունների և վաճառված ապրանքների գծով մուտքեր	15,079	5,389
Այլ մուտքեր	90	-
Վճարումներ մատակարարներին (ներառյալ՝ բաղաքացիաիրավական բնույթի ծառայությունների գծով) և նրանց անունից	(52,115)	(34,682)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(15,478)	(15,494)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(220)	-
Այլ վճարումներ	(807)	(1,240)
Գործառնական գործունեությունից ստացված/օգտագործված զուտ դրամական միջոցներ	579	(7,432)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով ելքեր	-	(69)
Ներդրված ավանդի մասնակի մարումից մուտքեր	1,998	2,973
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	1,998	2,904
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների ստացումից մուտքեր	-	2,050
Ֆինանսական գործունեության համար ստացված/օգտագործված զուտ դրամական միջոցներ	-	2,050
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	2,577	(2,478)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	59	(149)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	5,430	8,057
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	8,066	5,430

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2004թ. սեպտեմբերի 17-ին:

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամն իրավաբանական անձանց կամավոր զույգային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամի հիմնադիրն է «Բաց Հասարակության Ինստիտուտ» շահույթ չհետապնդող կազմակերպությունը՝ գրանցված ԱՄՆ, Նյու Յորք, 10019, 400 Ուեսթ 59-րդ փողոց հասցեում:

Հիմնադրամի գործունեության սկզբնական միջոցներն են հիմադրի կողմից ստեղծման պահին հիմնադրամին փոխանցված գույքը, որի սկզբնական արժեքը կազմել է 27,971 հազ. դրամ:

Հիմնադրամի մարմիններն են.

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը,
- Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 5 անդամից: Խորհրդի գործող կազմը ներակայցված է ստորև.

- Հեղինե Խաչատրյան - Խորհդրի նախագահ (2022թ. մարտի 5-ից)
- Հրաչիկ Հակոբջանյան - Խորհդրի անդամ (2022թ. մարտի 5-ից)
- Արամայիս Փաշինյան - Խորհդրի անդամ (2022թ. մարտի 5-ից)
- Իգոր Կարապետյան - Խորհդրի անդամ (2022թ. մարտի 5-ից)
- Ալինա Մանուկյան - Խորհդրի անդամ:

Հիմնադրամն իր նպատակներին հասնելու համար, օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ինքնուրույնաբար իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- Խորհրդատվական գործունեություն կրթության , մշակույթի և գիտության բնագավառներում ,
- Վճարովի դասընթացների , սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում կրթության,մշակույթի և գիտության բնագավառներում ,
- Ցուցահանդես-վաճառքների կազմակերպում և իրականացում կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում ,
- Գեղարվեստական և այլ գրականության, մանկավարժամեթոդական և այլ ձեռնարկների հրատարակում և վաճառք ,
- Շուկայի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում կրթության , մշակութի և գիտության բնագավառներում , գովազդի տարածման հետ կապված գործունեություն ,
- Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ կրթության , մշակույթի և գիտության բնագավառներում ,
- Ցանկացած տիպի նկարչական ,քանդակագործական և կիրառական բնույթի աշխատանքների կատարում և վաճառք,

- Մանկապարտեզների , դպրոցների , կրթահամալիրների հիմնում և կրթական գործունեության իրականացում այդ հաստատություններում ,
- Մանկապարտեզների , դպրոցների կրթահամալիրների և այլ նմանատիպ շինությունների վերանորոգման աշխատանքների կազմակերպում :

2023թ. հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 4 մարդ (2022թ.՝ 4 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գյուլբենկյան 31շ., բն. 20:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

Ներկայումս ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է ("դրամ"), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվեփակման ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվեփակման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքը.

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447□90	420□06
Ռուբլի	4.50	5.59

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլհամապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցիօգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	50 տարի
Սարքավորումներ	1-6 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրական և տնտեսական գույք	1-6 տարի
Համակարգչային տեխնիկա	1-5 տարի:

3.3 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.4 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների

մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

i. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Հիմնադրամի կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

ii. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնքչեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում

են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

iii. Այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը կամ վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

iv. Մնացորդներ բանկերում

Մնացորդները բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

II. Այլ կրեդիտորական պարտքեր

Այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր	Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք և համակարգչային տեխնիկա	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	7,778	2,799	4,320	2,938	17,835
Ավելացում	-	-	-	69	69
Օտարում	-	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,778	2,799	4,320	3,007	17,904
Ավելացում	-	-	-	-	-
Օտարում	-	(406)	-	(130)	(536)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,778	2,393	4,320	2,877	17,368
Կուտակված մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,878	2,799	3,809	2,929	12,415
Տարվա ծախս	152	-	511	13	676
Օտարում	-	-		-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,030	2,799	4,320	2,942	13,091
Տարվա ծախս	156	-	-	14	170
Օտարում	-	(406)	-	(130)	(536)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,186	2,393	4,320	2,826	12,725
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,748	-	-	65	4,813
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,592	-	-	51	4,643

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 10,499 հազ.դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 10,177 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

5. Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շնորհային միջոցներով ձեռքբերված ուսումնախաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ	8,306	9,621
Սեփական միջոցներով ձեռքբերված ուսումնախաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ	8,149	8,860
Վառելիք	528	61
	16,983	18,542

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրությամբ հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ:

6. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	1,305	3,002
Կանխավճարներ աշխատավարձի գծով	132	17
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	963	770
Տրված այլ կանխավճարներ	43	31
Այլ դեբիտորական պարտքեր	13	8
	2,456	3,828

7. Բանկային ավանդներ

31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ (31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ նույնպես) այս հոդվածում ներառված են ՀՀ դրամով, 5.5 % տարեկան անվանական տոկոսադրույքով և սկզբնական ներդրման պահից երեք ամիսը գերազանցող, սակայն մեկ տարին չգերազանցող ժամկետով ներդրված բանկային ավանդները:

8. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ բանկերում՝ ՀՀ դրամով	6,133	5,202
Մնացորդներ բանկերում՝ արտարժույթով	1,933	228
	8,066	5,430

9. Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ

Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվները իրենից ներկայացնում է Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների տարբերությանը, որն առաջացել է հիմնադիրների կողմից կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացված ծախսումների հաշվեառու ժամանակաշրջանի ծախսերի ճանաչումից: Հաշվի առնելով բացահայտվող տեղեկատվության օգտակարությունը, սույն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար, Հիմնադրամի ղեկավարությունը նպատակահարմար է գտնում ներկայացնել հիմնադրին վերագրելի զուտ ակտիվների շարժը՝

Հազար դրամ	Սեփական կապիտալի տարր	Կուտակված արդյունք	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ նախորդ տարվա հաշվետվությունների	27,971	4,876	32,847
Տարվա արդյունք	-	(1,878)	(1,878)
2022թ. դեկտեմբերի 31ի դրությամբ	27,971	2,998	30,969
Տարվա արդյունք	-	(2,062)	(2,062)
2023թ. դեկտեմբերի 31ի դրությամբ	27,971	936	28,907

10. Ստացված փոխառություններ

Փոխառության մնացորդ իրենից ներկայացնում է նախորդ տարի հիմնադրամի աշխատակցից ՀՀ դրամով, անտոկոս ստացված փոխառությունը:

11. Եկամուտներին վերաբերվող շնորհներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	-	9,715
Ստացված շնորհներ	54,030	39,061
Շնորհից եկամուտ	(47,682)	(48,653)
Շնորհի վերադարձ	(24)	(123)
Տարեվերջի մնացորդ	6,324	-

Հիմնադրամը 2023թ. ստացել է դրամական շնորհներ՝ 54,030 հազ. դրամի:

Գործընկեր	(հազ. դրամ)
Յունիսեֆ	52,317
ISSA	1,713

12. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	90	5,190
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	-	8
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	-	95
Ստացված կանխավճարներ	23	808
Շնորհատուներին վերադարձման ենթակա գումարներ	-	123
Արձակուրդի պահուստ	879	1,132
	992	7,356

13. Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայությունների մատուցումից	14,128	7,514
Ապրանքների (գրքերի) վաճառքից	45	71
	14,173	7,585

14. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ շահույթ/ վնաս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցներ	59	(149)
Կրեդիտորական պարտքեր	(1)	(1)
	58	(150)

15. Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների

մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր	1,318	3,010
Մնացորդներ դրամարկղում և բանկերում,ավանդ	14,149	13,113
	15,467	16,123

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	90	5,190
Փոխառություններ	2,050	2,050
	2,140	7,240

16. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

16.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

17. Պայմանական պարտավորություններ

17.1 Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

17.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ զույքին կամ շրջակա միջավայրին Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական դրության վրա:

17.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

18. Գործարքներ կապակցված կողմերի միջև

18.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

18.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնադրամի տնօրենը ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	5,294	5,308
	5,294	5,308

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.05.2024 16:05